ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 356 - Ա

«ՎԻԶՈՒԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԻՍՓԼԵՅՆԵՐՈՎ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող՝ 52,200,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հանրակրթական դպրոցների վերազինում ինտերակտիվ դիսփլեյներով» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01021075) «Ֆիրմա Ալֆա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01204713) 2025 թվականի մայիսի 16-ին կնքված թիվ՝ 16-05-2025 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 60 հատ ինտերակտիվ հեղուկ-բյուրեղային դիսփլեյի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 52,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

3. «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

05.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ